Աղյուսակ N 18

## ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունների տոկոսադրույքները և վարկային միջոցներից մասհանումները 2010-2012 թվականներին

մլն ԱՄՆ դոլար

| Վարկատուի անվանումը | Վարկային ծրագրի անվանումը | Վարկերի սպասարկման տարեկան տոկոսադրույքը | 2010թ. | 2011թ. | 2012թ. |
|---|---|---|---|---|---|
| | | | փաստացի | կանխ | կանխ |
| Ա | Բ | 1 | 2 | 3 | 4 |
| ՎԶՄԲ[1] | Ոռոգման համակարգի վերականգնման հրատապ ծրագիր | Libor + փոփոխ. մարժա | 17.059 | 4.598 | - |
| ՎԶՄԲ | Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում | Libor + փոփոխ. մարժա | 16.793 | 3.801 | - |
| ՎԶՄԲ | Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում | Libor + փոփոխ. մարժա | 12.800 | 14.938 | 12.262 |
| ՎԶՄԲ | Սոցիալական ներդրումների հիմնադրամի III ծրագրի II լրացուցիչ ֆինանսավորում | Libor + փոփոխ. մարժա | 1.287 | 5.059 | 0.654 |
| ՎԶՄԲ | Սոցիալական ապահովության կառավարման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում | Libor + փոփոխ. մարժա | 0.213 | 1.348 | 3.439 |
| ՎԶՄԲ | Պետական կառավարման համակարգի արդիականացման II ծրագիր | Libor + փոփոխ. մարժա | 0.223 | 4.240 | 2.205 |
| ՎԶՄԲ | Էլեկտրանային հանրության և մրցունակության բարելավման ծրագիր | Libor + փոփոխ. մարժա | 0.060 | 1.500 | 5.201 |
| ՎԶՄԲ | Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր | Libor + փոփոխ. մարժա | - | 1.000 | 12.335 |
| ՎԶՄԲ | Զարգացման քաղաքականության գործողությունների II վարկ | Libor + փոփոխ. մարժա | - | 4.000 | - |
| ՎԶՄԲ | Առողջապահական համակարգի արդիականացման II ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում | Libor + փոփոխ. մարժա | - | 0.048 | 7.998 |
| ՎԶՄԲ | Ոռոգման համակարգի վերականգնման հրատապ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում | Libor + փոփոխ. մարժա | - | - | 15.615 |
| ՎԶՄԲ | Համայնքային ջրամատակարարում և ջրահեռացում II ծրագիր | | - | - | 3.340 |
| ՀՄԳ[2] | Պատվարների անվտանգության ծրագիր | 0.75 | 0.134 | - | - |
| ՀՄԳ | Համայնքային ջրամատակարարում և ջրահեռացում | 0.75 | (0.043) | - | - |
| ՀՄԳ | Կրթության որակի և համապատասխանության ծրագիր | 0.75 | (0.020) | - | - |
| ՀՄԳ | Քաղաքային ջեռուցման ծրագիր | 0.75 | 1.281 | 0.656 | - |
| ՀՄԳ | Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր | 0.75 | 4.929 | 3.802 | 0.224 |
| ՀՄԳ | Պետական հատվածի բարեփոխումների ծրագիր | 0.75 | 0.588 | 0.033 | - |
| ՀՄԳ | Առողջապահական համակարգի արդիականացման | 0.75 | 0.462 | - | - |
| ՀՄԳ | Պատվարների անվտանգության II ծրագիր | 0.75 | 0.220 | - | - |
| ՀՄԳ | Սոցիալական ապահովության կառավարման ծրագիր | 0.75 | 0.316 | - | - |
| ՀՄԳ | Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր | 0.75 | 0.213 | - | - |
| ՀՄԳ | Վերականգնվող էներգետիկայի ծրագիր | 0.75 | 0.009 | (0.132) | - |
| ՀՄԳ | Թռչնագրիպին հակազդելու ծրագիր | 0.75 | 0.643 | - | - |
| ՀՄԳ | Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի III ծրագիր | 0.75 | 1.853 | 1.275 | - |
| ՀՄԳ | Դատաիրավական բարեփոխումների II ծրագիր | 0.75 | 4.259 | 4.988 | 0.831 |
| ՀՄԳ | Առողջապահական համակարգի արդիականացման II ծրագիր | 0.75 | 8.342 | 4.274 | - |
| ՀՄԳ | Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում | 0.75 | 8.067 | 8.210 | - |
| ՀՄԳ | Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագիր | 0.75 | 0.007 | - | - |
| ՀՄԳ | Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում | 0.75 | 0.106 | (0.000) | - |
| ՀՄԳ | Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ III ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում | 0.75 | 2.198 | - | - |
| ՀՄԳ | Կրթության որակի և համապատասխանության II ծրագիր | 0.75 | 1.994 | 6.257 | 5.971 |
| ՀՄԳ | Զարգացման քաղաքականության գործողությունների II վարկ | 0.75 | 0.248 | 21.044 | - |
| ՀՄԳ | Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր | 0.75 | - | 1.227 | 3.602 |
| ՀՄԳ | Զարգացման քաղաքականության գործողությունների III վարկ | 0.75 | - | 10.000 | - |
| ՀՄԳ | Զարգացման քաղաքականության գործողությունների IV վարկ | 0.75 | - | - | 43.000 |
| ՎԶԵԲ [3] | Սևանա լճի բնապահպանական ծրագիր | 5.76 / EURIBOR+1 | 5.667 | 2.590 | - |
| ՎԶԵԲ | Երևանի մետրոպոլիտենի վերականգնման ծրագիր | EURIBOR+1 | 3.184 | 3.568 | - |
| ՎԶԵԲ | Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր | EURIBOR+1 | - | - | 1.558 |
| ՎԶԵԲ | Երևանի մետրոպոլիտենի վերականգնման II ծրագիր | EURIBOR+1 | - | - | 3.575 |
| ԵՆԲ [4] | Երևանի մետրոպոլիտենի վերականգնման ծրագիր | EURIBOR+0.75 | - | 7.100 | - |
| ԵՆԲ | Երևանի մետրոպոլիտենի վերականգնման II ծրագիր | | - | - | 3.575 |
| ԵՆԲ | Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագիր | | - | - | 1.558 |
| ԳԶՄՀ[5] | Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր | 0.75 | 0.044 | - | - |
| ԳԶՄՀ | Շուկայական հնարավորություններ ֆերմերներին | 0.75 | 3.388 | 5.392 | 0.125 |
| ԳԶՄՀ | Գյուղական կարողությունների ստեղծում | 0.75 | - | 3.690 | 5.268 |
| ՕՊԵԿ հիմնադրամ[6] | Շուկայական հնարավորություններ ֆերմերներին | 3+1.2 | 3.962 | - | - |
| ՕՊԵԿ հիմնադրամ[6] | Գյուղական կարողությունների ստեղծում | 3+1.3 | - | - | 6.325 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ԱԶԲ [7] | Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիր և վերջինիս լրացուցիչ ֆինանսավորում | 1 (1.5) | 8.664 | 7.306 | - |
| ԱԶԲ | Ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր | 1 (1.5) | 12.102 | 8.565 | 1.369 |
| ԱԶԲ | Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցք (I մասնաբաժին) | 1 (1.5) | 1.498 | 23.720 | 26.413 |
| ԱԶԲ | Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցք (II մասնաբաժին) | Libor + 0.3 | - | - | 57.233 |
| ԱԶԲ | Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (I մասնաբաժին) | 1 (1.5) | - | - | 12.254 |
| ԱԶԲ | Ջրամատակարարման և ջրահեռացման II ծրագիր | 1 (1.5) | - | - | 1.200 |
| ԱՄՀ [8] | Պահուստային վարկ (Stand-By Arrangement) | SDR-ի տոկոսադրույք + մարժա | 37.793 | - | - |
| ԱՄՀ | Extended Credit Facility - ECF | 0 | 56.414 | 59.861 | 42.000 |
| ԵՄ [9] | Մակրոֆինանսական աջակցության վարկ (65 մլն EUR) | | - | 92.077 | - |
| Գերմանիա (ԶՎԲ)[10] | Էլեկտրահաղորդման սեկտորի վերակառուցման ծրագիր | 0.75 | 0.984 | 0.426 | 0.098 |
| Գերմանիա (ԶՎԲ) | Ջրային սեկտորի զարգացման II ծրագիր (Համայնքային ենթակառուցվածք - Լոռի և Շիրակ) | 0.75 | 0.954 | 2.211 | - |
| Գերմանիա (ԶՎԲ) | <<Գյումրի-2>> ենթակայանի վերականգնման ծրագիր | 0.75 / Swap rate + 1.25 | 0.336 | 2.367 | 5.502 |
| Գերմանիա (ԶՎԲ) | Ջրային սեկտորի զարգացման II ծրագիր (Համայնքային ենթակառուցվածք – Լոռի - Շիրակ - 2) | 2.6 | 0.374 | 8.296 | 11.021 |
| Գերմանիա (ԶՎԲ) | Հիդրոէլեկտրակայանների Որոտան կասկադի վերականգնման ծրագիր | 0.75 / 4.12 / 3.24 | - | - | 5.147 |
| Ֆրանսիա | Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր | 1.75 | - | 5.566 | 15.944 |
| Ճապոնիա | Էլեկտրաէներգիայի հաղորդման ծրագիր | 0.75/1.8 | 31.447 | - | - |
| Ճապոնիա | Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի ծրագիր | 0.75 | 35.078 | 8.462 | 1.146 |
| Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ | Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագիր | 3.5 | 0.826 | 2.000 | 1.356 |
| KBC Bank NV | Ցիկլոտրոնի ծրագիր | 0.72 | - | - | 3.632 |
| Ավստրիա | Բեմական սարքավորումների ձեռքբերում | 0 | - | - | 8.329 |
| **Ընդամենը** | | | **287.0** | **345.4** | **331.3** |

Ծանոթություն

[1] ՎԶՄԲ՝ Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ

[2] ԶՄԳ՝ Զարգացման Միջազգային Գործակալություն

[3] ՎԶԵԲ՝ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ

[4] ԵՆԲ՝ Եվրոպական Ներդրումային Բանկ

[5] ԳԶՄՀ՝ Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ

[6] ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ

[7] ԱԶԲ՝ Ասիական Զարգացման Բանկ

[8] ԱՄՀ՝ Արժույթի Միջազգային Հիմնադրամ

[9] ԵՄ՝ Եվրամիություն

[10] ԶՎԲ (KfW)՝ Գերմանիայի կառավարության Զարգացման Վարկերի Բանկ

ՎԶՄԲ-ի կողմից տրամադրված վարկերի փոփոխական մարժան վերանայվում է յուրաքանչյուր կիսամյակ:

ԶՄԳ-ի կողմից տրամադրված վարկերի գծով 01.07.11 - 30.06.12թթ.համար պարտավճարի դրույքաչափը սահմանվել է 0%:

ԶՎԲ-ի կողմից տրամադրված վարկերի համար հաշվարկվում է պարտավճար 0.25% դրույքաչափով

ԱՄՀ-ի Stand-By Arrangement վարկի սպասարկման գծով վճարվում են հետևյալ վճարները՝

- բազիսային տոկոսադրույք՝ SDR տոկոսադրույքին գումարած ֆիքսված մարժա, որը սահմանվում է ԱՄՀ-ի կողմից յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար: Բազիսային տոկոսադրույքը լողացող է՝ տատանվում է կախված շաբաթական կտրվածքով հաշվարկվող SDR-ի շուկայական տոկոսադրույքից,
- հավելավճար, որի հաշվարկը փոխկապակցված է ԱՄՀ-ում Հայաստանի Հանրապետության քվոտայի (ներկայումս 92.0 մլն SDR) հետ: Քվոտայի 300%-ը գերազանցող Վարկի դեպքում հավելավճարի դրույքաչափը կազմում է 2%՝ քվոտայի 300%-ը գերազանցող գումարի համար: Երեք տարի անց քվոտայի 300 տոկոսը գերազանցելու դեպքում՝ տարեկան լրացուցիչ 1%,
- ծառայության վճարը, վճարվում է վարկային միջոցներից յուրաքանչյուր մասահանման համար՝ մասհանված գումարի 0.5%-ի չափով,
- պարտավճար. 0.15% դրույքաչափ՝ քվոտայի 200%-ը չգերազանցող գումարի դեպքում, 0.30% դրույքաչափ՝ քվոտայի 200%-ից մինչև 1000%-ը, և 0.6% դրույքաչափ՝ քվոտայի 1000%-ը գերազանցող գումարների դեպքում: (Պարտավորության տարեկան վճարը կիրառվում է այն գումարների նկատմամբ, որոնք պետք է ստացվեն համաձայնագրի շրջանակում 12-ամսյա ժամանակահատվածում):

Մասհանումների 2012թ. կանխատեսումային ցուցանիշների և 2012թ պետական բյուջեով արտաքին վարկային ծրագրերի գծով նախատեսված ծախսային ցուցանիշների տարբերությունը պայմանավորված է համապատասխան վարկային ծրագրերի շրջանակներում բացված հատուկ հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդներով: